

# ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԻՌԼԱՆՏԱՅԻ ԽՆԴԻՐՆ

Քանի մ'ամիս առաջ, երբ եղիպտա-  
կան խնդիրն տակաւին լրագրոց կարեւո-  
րագոյն նիւթ չէր եղած, ընթերցա-  
սէրք ամեն օր հեռագրոց մէջ ան-  
համբերաբար կը փնտռէին լոնտրայի  
լուրերը և կը հարցընէին մէկմէկու իւ-  
րանտիւղ խնդրոյն եւքը:

Ի՞նչ է արդեօք այս խնդիրս կամ իւ-  
րանտիւղ առ Անգղիա ունեցած տետու-  
թեան պատճառն. արդեօք տարբեր  
ցեղերէ ծագումն ունենալին էր, թէ  
քաղաքական և կամ կրօնական պատ-  
ճառ մը, որ այս երկու ցեղերը միշտ ա-  
տելութեան մէջ կը սնուցանէ: Շատերն  
այս դժուրութեան պատճառը կը հա-  
մարին կրօնական տարբերութիւնը,  
և ամեն պատասխանատուութիւն Ան-  
նա Պոլենայի վրայ կը հեղուն, որ յօրիւն-  
տակելով Հենրիկոսի գլուխը և միւսքը,  
անգղիական հերձուածոյն պատճառ  
եղաւ, հերձուած մը՝ որ միայն յԱնգղիա  
կատարուեցաւ. վասն զի Յովհաննէս  
Նոքս իր վառվռուն պերճախօսութեամբ  
զՍկովտիա 'ի կալվինականութիւն շա-  
հեցաւ, և իւրանտա չուզեց փոխել իւր  
հայրենաւանդ. կրօնքը և հաւատարիմ  
մնաց հռովմէական դաւանութեան:  
Միանգամայն քաղաքականապէս չը-  
բաժնուեցաւ Անգլիայէն, մինչ Սկով-  
տիա Սրբաւարտեանց ձեռքէն էր: Եթէ  
կրօնից խտրութիւնը համարէինք այս  
ատելութեանց և պատերազմաց պատ-  
ճառ, նոյնը հարկ էր որ նկատէինք նաև  
ուրիշ ազգաց վրայ, որոնք յիրաւի նո-  
րաձևութեան ծագելուն՝ միանգամու-  
ժով յնցուեցան և պատերազմուէր ողո-  
ղեցին զԵւրոպա. սակայն անցաւ զար-  
մը, որդին երբ հանդարտեցան, և իննև

տասներորդ դարու մէջ անտեղի կ'ե-  
րեայ կրօնական խտրութեան մը մէջ  
այսքան ոխերիմ թշնամութեան մը ծա-  
գումը փնտռուել:

Ի՞նչ է ուրեմն ոյս պատերազմին  
պատճառն. ի՞նչ է Արարականի զաւ-  
նադրութիւնն:— Իւրանտական խնդի-  
րը կը կայանայ նոյն իսկ երկու ցեղե-  
րուն բնաւորութեան մէջ. Անգղիացւոց  
անձնաւանդաւոր զգացման և իւրան-  
տացւոց տկար և անաշխատասէր բնու-  
թեան մէջ: Այսու հանդերձ, չենք ալ  
ժխտեր որ ներքին քաղաքական պատա-  
հարք ալ զայն գրգռած ըլլան:

Երբ Անգղիական յեղափոխութիւնն  
տապալեց Սրբաւարտեան ցեղին դահը և  
իր մոլեգնութեան զոհ ըրաւ զկարողու  
Ա, իւրանտա չուզեց թողուլ իր թագա-  
ւորքը. տիրեց Գրամուէլ, յաջորդեց  
իւր որդին Հոլքարտուս, անցաւ յեղա-  
փոխութեան հոլմն, դարձան Սրբաւա-  
րտեանք, դարձաւ կարողու Բ. Անգ-  
ղիա իւրանտիւղ հաւատար ողջունեց զոր-  
դին, անոր՝ զոր 'ի մահ վարեր էր.  
կը դառնար իւր առջի թագաւորաց.  
բայց այս դարձած ժամանակ, մեծա-  
պէս զայրացած էր իւրանտիւղ գէմ, որ  
յեղափոխութեան մէջ չէր ուզած իրեն  
օգնական ըլլալ և կը պաշտպանէր  
ազգին չիփապագած թագաւոր մը: Այն  
օրուրէն տրուեցաւ իւրանտիւղ վճիռն:  
Անգղիական եպիսկոպոսուէր զայն ա-  
ւելի զրդռեցին: Բրիտանիւղ մեծնալուն  
սանդուղ մը համարուեցաւ իւրանտա-  
յի ծառայի կարգ դրուելը, և արդէն  
1632ի իւրանտիւղ վարիչ մը կ'ըսէր, որ  
զիւրանտա աւերելու կերպն՝ սոյն էր:  
Անկէ վերջն ամեն մէկ փոքր յանցանք

ընչից դրամամբ կը պատժուէր. յաւել-  
լունք ասոր վրայ պետութեան դրաւած  
երկիրները, զորս կը բաժնէր բաղդա-  
խնդիր անգղիացի երիտասարդաց աս.  
« young brothers of good families »,  
ինչպէս կ'ըսէին:

Իսլանտա 10 միլիոն արա կը բաժ-  
նուէր, յորոյ 3 միլիոն ճահիճք են. ար-  
դէն կարողա Ս. գրաւեր էր 2 միլիոն

250 հազարը: Գրումուէլաւելի յառա-  
ջեց և դրաւեց 5 միլիոն, և ասոնցմէ  
յառաջ եկան բազմահարուստ կա-  
լուստատէարք (Landlords):

Այս առաջին հարուածը բաւական  
չէր: Իռլանտացիք լաւ չուխաներ և լա-  
թեղէններ կը շինէին, որոնք ծանր  
գնովք կը ծախուէին 'ի Լոնտրա: Այս  
բանս անտանեկի երեցաւ Սքոթլիոյ վա-



ՍՏՈՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՏԵՐԿԱՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԿԼԵ

ԲԱՐՈՂ

ՆԱԲԹՈՂ

ճառականաց, և Գուլիէլմոս Ա. այն ա-  
նուանի քաղաքագէտ թագաւորն, օր  
մը Լոնտոնայի վաճառականաց նուիրա-  
կութեան կ'ըսէր, որ « ամեն ջանք պիտի  
ընեմ իռլանտայի ձեռագործքը խան-  
գարելու համար » :

Արդեօք կարիք էր ուրեմն որ իռլան-  
տացիք սիրով հնազանդէին այսպիսի  
թագաւորի մը և թագաւորութեւնը Անոր

համար զարմանք չէ եթէ 1500էն մինչև  
1700 զիռլանտա միշտ'ի յուզման գըտ-  
նենք և այլևայլ անուանակոչութեան  
խումբեր գլուխ կենան այս աղմկայ,  
որոնք մերթ կը կոչուին Ուոյդ-Պոյս,  
(Whyte-Boys, Peep-of day Boys, Heartz  
of Oak), և այլն, և ուրիշ նմանօրինակ  
անուններով: Եւ այս ամեն բանիս տը-  
ղիւնքն: — Այս զարուս սկիզբն յիւ-



ի առաջարկութեան վրայ խօսող հարտասանք:

ԿԻՏՏՈՒՐ

ԼՐԱԿԵՐ

ՏՈՐՈՒՐ

լանտա 12,000 կալուածատեարք կը  
զանուէին, յորոց 771ին ձեռքն էր գրե-  
թէ իւլանտիոյ կէսը. 2,000,000 մշակք  
կային և 2,000,000 անձինք՝ առանց  
ապրուստի: Եւ մինչդեռ 1696ին Լորա  
Էոսէքս իրեն մէկ երկիրը 'ի վարձու  
տուաւ տարեկան 250 ստէրլինի, նոյն  
երկիրն 15 տարի վերջը կու տար 1500  
ստէրլին, 1630ին՝ 2022 ստէրլին, հա-  
րիւր տարի վերջը՝ 8000 ստէրլին, և  
այսօր 60,000 ստէրլին: Ուրեմն ինչ չա-  
հեր էր իւլանտա իր ամենայն յուզ-  
մունքներովն և քաղաքական ապստամ-  
բութեամբք. — Անգղիական լծոյն ա-  
ւելի ճնշումը:

Իւլանտա զանազան անգամ բողոքեց  
դարուս մէջ այս լծոյն դէմ. սակայն այն  
ամենայն ազատութիւնք և բարեկար-  
գութիւնք, որոնք կատարուեցան յԱնգ-  
ղիա, բնաւ արձագանգը մը չունեցան  
յիւլանտա: Ուղղափառաց ազատու-  
թեան հրովարտակն մեծամեծ յոյսեր  
տուներ էր, բայց 'ի գուր. աղքատու-  
թիւնն երթալով յառաջեց, կէս մ'ալ ժո-  
ղովրդեան անգործութենէն: Իրենց սը-  
նունդն է գետնախնձորն. սակայն հա-  
սաւ այս բերքին վրայ գաղտնակին հի-  
ւանդութիւնն և տիրեց յիւլանտա ա-  
հաւոր սով մը, սով մը՝ թերեւ անկարե-  
լի համարեալ յժիթ դարու յեւրոպա,  
այլ հարկ է հաւատալ վասն զի մեր օ-  
րերը եղաւ: Այս սովէն ստիպեալ մի-  
լիոնաւոր անձինք բռնադատեցան թո-  
ղու երկիրներն և դաղթել Ամերիկայի  
անապատներն. աշխատաւորաց ձեռքն  
պակսելով, բերքերն ալ նուաղեցան.  
սակայն անգլիացի կալուածատեարց  
փոյթին չեղաւ. մնացողաց վրայ վարձք  
ժանրաբեռնեցան, կրկին նորոգեցան  
դաղթականութիւնք, կրկին վարձուց  
ժանրութիւն, և ասոնց յետին գումարն  
— աղքատութիւն և թշուառութիւն:

Եթէ այս կալուածատեարք յիւլան-  
տա բնակէին, գրամը երկրին մէջ մնա-  
լով և հօն չըջան ընելով թերիս չահ  
մ'ըլլար իւլանտացոց. սակայն այս  
ճոխ կալուածատեարք իրենց բնակու-  
թիւնքը հաստատած էին 'ի ինտրա, ուր

կենաց ամենայն դիւրութիւն և հան-  
գըստութիւն կայ, և ուլ կրնար զայն ի-  
րենց արգելուլ: Յիրաւի պէտք է  
ճանչնալ, որ վիկտորիա թագուհւոյն  
վարչութեան միջոյ զանազան ազատա-  
կան պաշտօնեաւք շանային բժշկել Անգ-  
ղիոյ այս մեծ վէրքը և դարման մը տա-  
նել իւլանտիոյ բողոքներուն. սակայն  
այնչափ մեծ է վէրքն՝ որ մեծ ժամանակի  
պէտք ունի բժշկութեան, և զոր դժու-  
րաբութելի ըրած է նաև իւլանտա-  
ցոց անընդել բնաւորութիւնն. փոխա-  
նակ համադեցուցիչ և դիւրին պատճա-  
ռաց և միջոյնք փնտռելու և ոսն առ  
ոսն զիմելու յազատութիւն, անդէն  
մէկ օրուան մէջ կ'ուզեն 'ի սպառ թօթա-  
փելանգղիական լուծը, և բնաւին ինքն  
իշխան երկիր մը ձեանալ. սակայն այս  
նոր ազատարարք գոնեայ ունենային Օ'  
Քոնելի հանճարը և ոգին, զոր իրենց ա-  
ռաջնորդ կը համարէին: Օ'Քոնել իր  
անուանի հսկայական ժողովներով կը  
կուուէր ընդդէմ Անգղիոյ վարչութեան  
և զուղղափառութիւնը կը ջանար ազա-  
տել եպիսկոպոսաց հարկահանութե-  
նէն. սրբազան էր և օրինաւոր Օ'Քոնե-  
լի նպատակն. և եթէ Օ'Քոնել իր կե-  
նաց մէջ բաղդ չունեցաւ այս ազատու-  
թիւնը տեսնել, սակայն գոնեայ իր յա-  
ջորդք զայն վայելեցին, և իւլանտա  
կրնար երախտագէտ գտնուիլ կլէտըս,  
ղընի, որ իր ազատական պերճալուստու-  
թեամբք պաշտպան երեցաւ իրեն: Սա-  
կայն իւլանտիոյ համար մեծ վնաս եղաւ  
Օ'Քոնելի երազ մահն:

Իր տուած մղմամբ՝ մահուրէն վերջն  
ալ հայրենասիրական ընկերութիւնք  
ձեւացան՝ ոգիները յարթնութեան պա-  
հելու. Նորաքոյոյթը իշխանուաւ և բո-  
ղոքողք Օ'Քոնելի վարդապետութեանց  
պահարանք անուանուեցան, Նեօլլըն  
լրագիրն ինդիրը բորբոքեց, և այս ան-  
գամ աղնուական նորաղանդ իւլանտա-  
ցի մը իր հայրենեաց բողոքոյն զուլս  
կ'անցնէր, որով և կը փոխուէր Օ'Քո-  
նելի դիտումն, և այս անգամ ուղղափա-  
ռութիւնն չէր շարժառիթ յուզմանն,  
այլ հայրենեաց ազատութիւնն:

Սմիթ Օ' Պրիէն իռլանտիոյ հին թա-  
գաւորաց ցեղէն սերնալ էր, և իր ըն-  
տանեաց մէջ կը դառնուէր թէ լարտու-  
թիւն և թէ մարդիգլուխիւն: Օ' Պրիէն  
տաւանհետական ամենայն ապարտական  
և պատուաւոր յատկութիւն ունէր, ա-  
ռանց կարողութեան շարժման մը գը-  
լուխ կենալու, որուն համար մեծ ճար-  
տասանութիւն կարեւոր էր: Օ' Պրիէն  
43 ամեայ էր յուզման զլախ անցած  
ժամանակ, օգնական ունենալով իրեն  
զիծովմաս Ֆրանսիա Միկըր 23 տարուան  
երիտասարդը, որ կուսակցութեան աշ-  
խոյժ և կայտառ ճարտասանն էր, զՍի-  
կըր անուանի մատենադիրը և զՏիւֆֆի,  
երկուքն ալ հասգիւ երեսնամեայ: Սա-  
կայն այս ազնուական տարերաց և դա-  
ղափարաց հետ միացուռ ռամիկ բազ-  
մութիւն մ'ալ, որ աւելի շփոթեց զՕ'  
Պրիէն: Ի 1848ին, Գաղղիոյ յեղափո-  
խութեան և հասարակապետութեան  
հաստատուելուն առթիւ, նուիրակու-  
թիւն մը գնաց առ Լամարթին, որ  
Արտաքին գործոց պաշտօնեայ էր. բա-  
նաստեղծ պաշտօնեայն վեր ի վերոյ ան-  
շան խօսքերով զանազ միտթարեց և  
ճամբեց: Շատ երկար կ'ըլլար եթէ  
պատմէինք նորարողով իտալիոյ հրա-  
տարակած յոգուածները, կուսակցու-  
թեան բազմանալը, Միկըրի նախ բռն-  
նուիրը և ի Պերմուտա զրկուիրը, Օ' Պրիէ-  
նի պատերազմը ի Պելլինկէրի Դիբբէ-  
րարի, իր անձնանուէր կռուելով հան-  
դերձ՝ պարտութիւնը, և քիչ օր վերջը  
լիմբիք երթալու ատեն շոգեկառաց  
կայարանին մէջ ոստիկանութենէն բռն-  
նուիրը: Ատեանը փութով վճռեց որ  
« կախուի », զլիստաուի և չորս մաս  
բաժնուի » : Ամբողջ դատաստանին  
միջոց ծանր և արժանապատիւ կերպ  
մը ցրցուց և հանգարտութեամբ ը-  
սաւ միայն, « սր ինքը ջանացեր էր  
կատարել իւր պարտքը առ իւր հայրե-  
նիս, և թէ պատրաստ էր կրել ամենայն  
հետեանք » : սակայն զլիստաու մը չկա-  
տարուեցաւ. և թագուհին Օ' Պրիէնի  
մահը մշտնջենաւոր արքայի փոխեց:  
Քիչ օր վերջը բռնուեր էր նաև Մի-

կըր, որ հաւասար Օ' Պրիէնի դատա-  
կենիք ունեցաւ և նոյն ներումը ի թա-  
գուհւոյն: Դատաստանին միջոց, երբ  
ամենուն սիրան յուզեալ կեանք և նե-  
րումն կը խնդրէր, կտրիճ 23 տարուան  
գեղեցիկ երիտասարդին համար, ինքը  
դարձաւ դատաւորաց և ծանոյց որ եր-  
բեք ներումն խնդրելը չունէր. « Մի  
կարծէք որ դողդոջուն չըթամք կեան-  
քըս պիտի խնդրեմ. ես զայն արդէն  
նուիրեցի հայրենեացս՝ իր ազատու-  
թեան համար. . . » : Կլիստաուաց մա-  
հումք բարձու Նորաքողով ընկերու-  
թիւնն, որուն ծոցոյն մէջ կային բազմա-  
թիւ նշանաւոր երիտասարդը: 1848ին  
յուզման այս աղետալի վերջն՝ երկար  
ատեն երկիրը ի նուաճման բռնեց, նա  
մանաւանդ որ վիկտորիայի ազատ վար-  
չութիւն մերթ ընդ մերթ աւելի կը  
քաղցրացէր իռլանտիոյ վիճակը, երբ  
կէտսով և ազատական պաշտօնեայն իշ-  
խանութեան կը հասնէր. սակայն ան-  
կարելի էր համարել որ ի սպառ վեր-  
ցուեցան տեղուհիւնք:

Յամին 1879 թաւըը, Տէվիդ, Տիլլըն  
Քիդգըլ, Պրէնան, Վէքսթըն և Նէլի,  
Տրալլինի մէջ հաստատուեցին իռլանտաւ-  
կան-Ազգային-Ազարակային (Irish-  
National Land-League) անուանի դաշ-  
նակցութիւնը, որ քիչ օրուան մէջ տա-  
րածուեցաւ ընդ բովանդակ իռլանտաւ:  
Իրեն նպատակ դրաւ, բնաւ բռնական  
և արինահեղ միջոցներու չգիմել ինչ-  
պէս երբեմն նախնի Ֆէնէանը, և իւր  
դրօշին վրայ գրեց « Ոչ վարձ » (No  
rent) խօսքը, սպառնալով վարձաւո-  
րաց, եթէ վճարէին տու տնարս ունեցած  
վարձուց պարտքերնին: Վայ էր անոր՝  
որ այս ծանուցագրին չհնազանդէր,  
գաղտնի ընկերութեան պաշտօնեայք  
մահումք վրէժը կ'առնուին, և երկու  
տարուան չափ իռլանտիոյ հեռագիրը  
ամեն օր կը պատմէին կալուածատի-  
րոյ մը սպանութիւնը, մացառներուն  
ետեան ընդունած գնտակով մը, կամ  
դրամական վարչութեան մը վրայ դե-  
մակաւոր անձանց յարձկիւր և այրելը,  
կամ ոստիկանութեան հետ արինահեղ

կոխ մը: Ընկերութիւնն անկտրելի էր որ մնար միայն իր բողքին և սպառնալեաց մէջ. սկսեալ էր միանգամայն կռուիլ Պետութիւնն որ ի սկզբան միայն հրաւիրուած մը կը ջանար գահ ըլլալու, հարկ համարեցաւ վերջապէս բռնական միջոցներու գիծել, և 1881ին երկու հրովարտակ հրատարակեց. առաջնով բոլոր իռլանտա պաշտօնական վիճակի մը մէջ գրաւ, իշխանութիւն տալով վարչաց բանտարգելուն և դատելու ամենայն կապիտալիստ անձն. երկրորդով Յանձնաժողով մը հաստատեց քննելու վարձքերը, զանոնք արդար սահմանի մը վերածելու, արգիլել կալուածատնարաց ըստ կամս պահանջածները, և ապահովել վարձուորաց իրենց աշխատած գործատուները: Հետևաբար բռնուցան և բանտարկուեցան նշանաւոր յուզիչքն Բառնը, Տիլլըն, Սէյլըն, Հէլի և այլք, արգիլուեցան ազատ լրագիրներն, և զէնքերն ժողուեցան տուններէն: Բայց երբ արք բռնուեցան, կանայք ձեացուցին ուրիշ ազարակային դաշնակցութիւն մը, որուն գլուխ կեցաւ Բառնըի քոյրն Միս Աննոն, և Պետութիւնը բռնագատուեցաւ բանտ դնելու նաև այս տիկիներէն երկուստսն անձինք, որոնք տնական գործերին ձգած քաղաքացիութեան ելբր էին: Սակայն այս բանտարգելութիւնը և հրովարտակը բնաւ օգուտ մը չունեցան, իռլանտա նոյն զգացման մէջ մնաց ինչ որ առաջ էր, և չուզեց վարձք վճարել: Երկու տարի առաջ կըտրիճ հազարապետն Պոլքոք իրեն վրան առաւ կալուածատնարց կողմէն երթալ յիռլանտա և ժողուել վարձքերը: Անդդիացի գործաւորաց շոկատ մը ձեացուց և հասաւ յիռլանտա. ոստիկանութիւնն ալ իրեն զէնք, հետեակ հեծեալ և հըրանթիք տուաւ, որոնցմով ամրացուց Պոլքոք իր կալուածները: Իռլանտայիք տեսան որ անկարելի էր յաղթել բռնութիւն, նորօրինակ միջոցներու դիմեցին: Այս եկողները չկրցան զանել մէկը որ իրենց խոհակերութիւնն էր, կամ հաց, գինի, միս և ըմպելիք մատակարարէ:

Պոլքոք յուսահատած իր սովեալ և քաղցեալ շոկատներով հաղիւ ինքզինքը յԱնգղիա ձգեց:

Իռլանտայիք իրենք ալ հաւանեցան այս բռնած կերպերնուն վրայ, և նոյնը սկսան ընել նաև կալուածատնարց, ոստիկանութեան անձանց և վարձք վճարողաց, և որոնց տուններուն վրայ յանկարծ կրպցուած կը տեսնուէր թղթով խաչ մը, գանկ մը և մեռելի անտուկ մը այս ահաւոր վճռով «վճարեց իւր վարձքը»: Անգղիական Պետութիւնն աւելի ստատկայցուց իւր հալածանքները: Ազատկալի գաշակցութեան պաշտպանք իրենց մէջ ճանչցուելու համար միտալ մը չինեցին, մէկ երեսը գնելով Բառնըի պատկերը, միւս կողմը իռլանտիոյ նըշանը զգնար, և մտքերնին գրին բնաւ տեղիք չտալ մինչև որ Անգղիա չզիջանի ազատելու իռլանտայի կալանաւորը և իրենց ինքնիշխան վարչութիւն չտայ:

Եւ յիսուի բոլոր Եւրոպա կը համարէր որ կլէտպըն իւր ազատական գաղափարներով հուսկ ուրեմն միջին ճամբայ մը խորհելու ետեւէ է: Պաշտօնաբանի անգղիացի ընդդիմակացը զինքը կողմնակից կամբաստանէին իռլանտիոյ, երբ ահաւոր սպանութիւնը հիմն ի վեր տապալեցին ամենայն յոյս:

Մայիս 6ին պետութեան ատենադպիրն Լորտ Քէմլընտիշ և իւր փոխանորդն Պրըք, յետ օրական վաստակաց կը ճեմէին անկասկած և անդէն միւս բան Քէմլիքս փոյք կոչուած պարտիզին մէջ, երեկոյեան ժամը 7 1/2ին ատեն. և հա՛տ չորս անձինք վրանին կը յարձրէին, որոնք դաշտիներով մահացու կերպով կը հարուածեն զիրենք: Այս ահաւոր տեսարանին միայն ներկայ կը դռնուի հեռուէն Յակովք անուամբ պատանի մը, որ կը տեսնէ այս չորս անձանց քաղաքին հակառակ ուղղութեամբ փախուտար: Եւ թէպէտ պարտիզին մէջ բազմութիւն անձինք կալին, սակայն բնաւ աչք մը չի տեսներ զիրենք: Քիչ վերջը կ'անցնին հոսկէ ուրիշ անձինք, որոնք թէ զՔէմլընտիշ և թէ զՊրըք յարեան թաթաւեալ կը

գտնեն բաղմամբիւ հարուածներով և տնկենդան, կը վազէ ամբոխն, կը հասնի օտարկանութիւնն եղբրան տեղը և գիակաները կը տանին մերձաւոր անկէլանոցը :

Լորտ Ֆրեմտերիք Բէվլենտը Սնգգիոյ հին իւրեւական ընտանիքէ մը սերեալ էր, իւր հայրն զուրն Տէվլենտի 80 ամեայ գեռ կ'ապրի, իւր եղբայրն պաշտօնեայ մարգիզն Հարդինկըքն չափաւոր ազատականաց մասին զլուխ է: Ինքն ծընած էր յամին 1836 ին. տակաւին 23 ամեայ կրէնվիլ պաշտօնէին (1859—1864) տոննձին տոնեադպիր եղած էր Յամին 1872 կրէտոգընի պաշտօնեայ եղաւ, և 1880 ին անուանեցաւ տոնեալ գպիր Ելմտից պաշտօնէին : Եւ յայսմ մեծ համբաւ ստացաւ իբր ճարտար մատակարար : Իւր մահունէն եօթնեակ մը յառաջ, եղբոր թախանձանօք յանձն առեր էր իւլանտիոյ Լորտ փոխանորդութիւնը, այն է փոխարքային տոնեադպրութիւնը, զոր իրմէ առաջ կատարեր էր Ֆորսըքը : Իսկ Պըքը ծնած էր 1829 ին, իռլանտացի էր և ուղղափառ, տոնեակից հօշականուն վայգման ծիրանաւորին : և թէպէտ կամ ազատ իւր դաղաւարակ մէջ, սակայն հաւատարմութեամբ ծառայեր էր իրեն յանձնեալ ամեն պաշտամանց մէջ :

Այսպիսի ահաւոր եղբրան մը տպոււորութիւնն յայտնի էր. մանաւանդ այնպիսի ժամանակ, յորում կը համարուէր որ իռլանտական խնդիրը լմնցած ըլլայ և Բառնըլու կրէտոգըն մէկմէկու ուրախակից պիտի ըլլային յաճող երեց վրայ :

Տակաւին քիչ օր առաջ Բառնըլու ազատ ձգուեր էր բանտէն՝ ու թոյն համար երթալու 'ի փարիզ և իր մօրը կենացը վերջին շունչը ամփոփելու. և կրէտոգըն բնաւ մոխի չընելով ընդդիմակայից նախատանաց, նորօրինակ հաստատամտութեամբ և յանգգնութեք իռլանտիոյ համար հրովարտակ մը պատրաստեր էր, որ կրնար կրէտոգընի ազատականութեան և բարեկար-

գութեանց ամենէն բարձր կէտը համարուիլ :

Այլ ևս խնդիր չկար քաղցրացնելու վարձուորաց վիճակը, հապտ վարձուորները և գիւղացիները կալաւածատէր փոխելու: Կրէտոգըն Լորտերուն խորհրդարանին մէջ կ'առաջարկէր որ պետութիւնն ցնէ երկիրները արգի կալաւածատէրերէն, և թէ իռլանտացիներ կալաւածատէրք վճարեն Տրալլինի վարչութեան վերաբերեալ ծախքերը, և 40 տարի 100 ին 6 1/2 շահ վճարեն: Այս առաջարկութիւնն շատ քիչ կը տարբերէր Ոգարակային դաշնակցութեան խնդրէն, և կրնար համարուիլ որ պետութիւնն միջին ճամբայ մը զտեր էր: Բառնըլ Բիլմէնհէմի բանտէն բոլորովին ազատ թողուեցաւ, ազատեցան նաև Տիլլըն և Օ'Բէլլէ, ինչպէս նաև ուրիշ իռլանտական խնդրոյ համար դատապարտեալք. Լորտ Սիլենսըր իռլանտիոյ փոխարքայ անուանուեցաւ, և Ֆորսըքը, որ խիստ միջոյններ կ'ուզէր գործածել իռլանտիոյ վրայ, տեսնելով պետութեք բռնած հակառակ ընթացքը, հրաժարեցաւ իռլանտիոյ Պաշտօնէութեանէն :

Կրէտոգըն ինքնին գոհ էր այս ազատակային ըլլալիք յեղափոխութեք վրայ. գոհ էին և իռլանտացի երեսփոխանք. Տրալլինի սպանութիւնն մեծ հարուած մ'եղաւ նաև Բառնըլի և Ագարակաւին գաշնակցութեան: Անկարելի է նշեալարագրել ընդհանուր Անգղիոյ ժողովրդեան զայրոյթը ընդդէմ՝ կրէտոգընի և ազատականաց. իռլանտացիք ալ իրենց կողմնէն յայտնեցին իրենց սառսափը, և բանտէն նոր ազատեալ Ագարակային գաշնակցութեան գլխաւորք, մեծապէս յուզեալ այս տհաւոր ոճրոյն վրայ, կը ցուցնէին միանգամայն ցաւերնին, որք թէպէտ և անմեղ, սակայն կը խիթային կորանցընելու յուսացած շտրհներն: Դաշնակցութիւնն Բառնըլի, Տիլլընի և Տէվիդի ստորագրութեամբ յայտարարութիւն մը հրատարակեց, յորում կ'ըսէր, թէ յերկնիկ ապագայի մը նախընթաց իրիկունը աղետալի ճա-

կատագիր մը հարուածեց աղետալի հարուածով մը մեր յոյսերը : Դաշնակցութիւնն կ'ուզէ յայտնել իր լանտացի ժողովրդեան համակրութիւնը՝ այսպիսի աղետից մէջ՝ առ այն անձինս, որոնք ուզեցին հաշտութեան ճամբայ մը փնտռել 'ի քաղաքագիտութեան' : Դաշնակցութիւնն կը յուսայ որ բոլոր իւլանտացիք պիտի յայտնեն իրենց սարսափը այսպիսի անգթութեան համար : Հիւրասէր իւլանտիոյ անունն վատութեան անուամբ մը արտառութեցաւ, և

որաւոր պիտի տնէ ցորեան սպանորդ արդարութեան ձեռքը չյանձնուին» : Բաւորի և իրեն կուսակցաց հրատարակութիւնը միայն արտաքին ցոյց մը չէր : յիշուի բոլոր իւլանտա զարհուրեցաւ այս եղերան վրայ, և ժողովուրդը ապշած ընդարմացած կերպարանք մ'առաւ : Սակայն որչափ որ ալ Դաշնակցութեան զլխաւորք իրենք զիրենք արդար կը ճանչնային, արդեօք յանցանայ մաս մ'ալ իրենք չունէին : — Բաւական է գրգռել միանգամ ժողովուրդը, հե-



ԲԱՌԱՆԸ, ԻՈՒԼԱՆՏԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ԳԼԽԱՆՈՐ ԱՐԻԷՐՈՆՆԱ :

տեսնեցներն մեզի ծանօթ են, և 'ի դուր տրիրունք կը ջանան անբասիր ընել իրենք զիրենք : Առաջին անգամ չէր որ իւլանտիոյ մէջ այսպիսի ոճիրը կը գործուէին, այս յետին տարիներուս մէջ լինողիւյ լրագիրք լի են սպանութեանց հրատարակութեամբք, որոնց առջին չէին ուզած առնել Դաշնակցութեան գլխաւորք :

Որչափ որ մեծ էր Դաշնակցութեան գլխաւորաց ցաւն, նոյնչափ առաւել սաստիկ էր խորհրդարանին մէջ չափաւորականաց զայրոյթն : Երբ լուրը տըրուեցաւ, խորհրդարանն 'ի նշան սգոյ նիստը վերցուց : Նորթգող ընդգիմակացից ամենէն եռանդուն պիւճախոսն՝ հռչակաւոր ճառով մ'ամբաստանեց զկէսապղծն որ քիւլմէնհէմի բան :

տին մէջ եղողներուն հետ նամակով զաշնակցութիւն սկսելով, զիրենք հա՛մարձակեցուցեր էր այսպիսի եղբրան մը. կլէտադըն ժխտեց այս յարաբե-  
րութիւնը. սակայն նկերս—Պիշ երեսփո-  
խանն առաջարկեց անվտանգութեան քուէ մը տալ պաշտօնարանին, և ի լոնս արեա ժողովակ մը պիտի կազմուէր թագուհիէն խնդրելու խորհրդարանին արձակումը:

Ամեն լրագիրը, ամեն հեռագիրը որ օրուան վրայ այնպէս կը ցրցուէին թէ մերձ էր կլէտադընի անկումը և նա խառնական անկում մը, որ իրեն հետ պիտի կրէր բոլոր Անգլիոյ վայրոյթը և արհամարհանքը, կլէտադըն չառգնա պեցաւ, իրրն հմուտ ղեկավար մը այն նաւուն՝ զոր 50 տարուկնէ ՚ի վեր կը ճանչնար. հանդարտ ղեկին քով կեցած սպասեց փոթորկին առաջին բաղկմանց խորտակուելուն. պաշտպանեց ինք-  
զինքը, բայց հանդարտութեամբ. և արդեօք յանցանք մ'էր իրեն՝ եթէ ուզեր էր դժբաղդ երկրի մը վիճա-  
կը բարւոյնել, եթէ անգլիական տարե-  
գրոց մէջէն կ'ուզէր վերցընել այս ան-  
վերջամալի իռլանտական կռիւն և վէ-  
ճը, ինչէն իւր կողմանէ ամեն ջանքն  
ըրեր էր օգնել խշուառաց, իսկ թէ քաղցրութեամբ չէր կրցած շահիլ, հի-  
մա ամենէն առաջ ինքը պիտի շարժէր  
պետք եղած ուժով միջոյնները գործա-  
ծելու, միայն թէ խորհրդարանն իրեն  
համոճայնի:

Կլէտադըն իւր հաստատամիտ և խո-  
րագէտ կերպարանքը զգեցաւ, քէվլըն-  
տիչի տեղ անուանեց զիբրվիլէն իւր հա-  
ւատարմներէն մին, արենակից Լորտ  
Մագաօլէի պատմագիրն, բարեկամ իռ-  
լանտից, ազաաաաէր, որով և սիրելի իռ-  
լանտացոց աւելի քան զքէվլընտիչ, որ  
յսգլոռակաւնաց էր. նաև Ռոդոլֆ Կո-  
նիւստիլ (Coercion bill) պատ-  
րաստեց, որուն նպատակն էր, Ա. Ապա-  
հովընն լեղերանց պատուհասը, Բ. Յան-  
ցանաց առաջը առնուլ, Դ. Խափանելառ-  
ոճիրս գրգռումներն բըր. Առաջին նպա-  
սակին հասնելու համար տեղապահ

Լորտը կամ փոխարքայն իռլանտիոյ, բաց  
ի սովորական դատաստանաց, Բարձրա-  
գոյն ատենին երեք դատաւորներէ յան-  
ձնաժողով մը պիտի ձևեցնէր, ա-  
ռանց երդուելոց, որոնք այս տեսակ  
յանցանքները պիտի դատէին: Յանձ-  
նաժողովը միաձայն պիտի վճռէր. բայց  
եղբրական դիպաց մէջ կրնար բողո-  
քուիլ, և բողոքը ընդունուի՞ք պիտի ըլ-  
լային Բարձրագոյն ատենէն ընտրուած  
ուրիշ դատաւորը: Այս ատենանը կրնար  
չափաւորել վճիռ մը, նուազեցնելով  
միայն պատուհասը: Իսկ փոքրագոյն  
յանցանաց համար ուրիշ աւելի դիւրին  
ատենաններ պիտի հաստատուէին երկու  
դատաւորներէ: Երկրորդ նպատակին  
հասնելու համար, հրովարտակը գոր-  
ծագիր իշխանութիւն մը կը հաստա-  
տէր, թէ ցորեկ և թէ գիշեր խուզարկու-  
թիւն ընելու զինուց, թղթոց, և այլն.  
նշանակուելիք գաւառաց մէջ իշխանու-  
թիւն կու տար բանտարգելու և դա-  
տաւորաց մասնելու այն անձինքը, որ  
գիշերը կը թափառին աստանդական  
և կամ իրենց վրայ տեղեկութիւն չեն ու-  
զեր տալ, նաև անոնք՝ որոնք օտար են,  
և զորս արդէն Օտարաց հրովարտակը  
հրաման կու տայ արտաքսելու Տէրու-  
թեան սահմանէն դուրս, երբ ներկա-  
յութիւննին կասկածաւոր ըլլայ: Եր-  
րորդին նպատակն է՝ կաշնակուելու և  
դատաստանի մասնելու դադրտ անկա-  
նան ընկերութիւնը կամ անոնց մաս-  
նակցոյքը. կշտամբելու, արգիլելու  
լրագիրները և կամ աւելցնելու զը-  
րաւնին:

Բայց այս երեք կէտերէն դուրս կան  
ուրիշ մասեր ալ ՚ի հրովարտակին. ինչ-  
պէս, դատաւորը ստիպեն զվիպայ երե-  
նալու. իշխանութիւն ունենայ փոխա-  
քայն բաղմացնելու ոստիկանութիւնը.  
և այս հրովարտակը պիտի տեսն երեք տա-  
րի: Միով բանիւ իռլանտա պաշարման  
վիճակի մէջ կը գրուէր և կ'ոչնչանային  
ամենայն յոյսը: Իռլանտացի երեսփո-  
խանք բողոքեցին, Տիլլըն արհնձուշտ  
զայն կաշեց. Բառնըլ զայն անօգուտ  
հրատարակեց, և որ երբեք կատարուամբ

պիտի չունենայ. սակայն հաղիւ խորհրդարանին ներկայացուած էր, և անդէն ընդունելի եղաւ 327 քուէով ընդդէմ՝ 22ի :

Այնքան զայրացիր էր ընդհանուր կարծիքն, որ ընդգիմակաց իւրանտացի երեսփոխանք այս անուանի նստին միջոց դուրս հանուեցան, որպէս զի ուղղորդութիւնը չարգիւրդի :

Այսպէս 'ի զուր փորձեր էին 'ի գլուխ հանել Ագարակային դաշնակցութիւնը, զոր չէին կրցած կատարել Օ' Բոնէի իրեշատոր գումարումներն, Օ' Պրիէնի անձնանուիրումն. և քէվլընտի ռ. Պըրքի գերեզմանները առ ժամանակ հանգստարան մը եղան իւրանտական խնդրոյն :

Էս սակայն տակաւին չիմացուեցան մայիսի 6ին եղբրան բուն պատճառն. զանազան անձիք բռնուեցան իբր կառկածաւորք և արձակուեցան. 'ի զուր Պե. տութիւնը 250,000 ֆրանք խոստացաւ տանողին. ցարդ մութ ստուեր մը պա-

տած է դաւաճանութեան վրայ. միայն այսօրոք յայտնի կրնայ համարուիլ, որ կոյր կրից հետեանք մ'էրք և ոչ քաղաքագիտական կամ հայրենասիրական վրէժխնդրութիւն մը :

Բայց արդեօք Ուղղորդեալն հրովարտակով լմնցաւ իւրանտական խնդիրն : — Այնքան բազմաթիւ են պատմական օրինակք՝ որ չեմ գիտր զորը յիշել, ցուցնելու համար միայն՝ որ եթէ կայ՝ ծը առ ժամանակ միւրոյն ներքեւ ծածկուեցաւ, սակայն օր մը քիչ մը փշուելով նորէն պիտի արժարծի հրգեհ մը յարուցանելու, նա մանաւանդ որ փշոք միշտ պատրաստք են. և Անգղիա որ հիմա զբաղած է եգիպտական խնդիրը յառաջ մղելու և իր պատուովն մէջէն ելլալու, պիտի տեսնենք որ հազիւ զայն լմնցուցած, կրկին պիտի բռնադատուի դարձնելու իր ուշադրութիւնը իւրանտային խնդրոյն վրայ :

Հ. Մ. ՆՈՒՐԻԻՅԵՍ

Շոգեշարժ երգեհուն մը : — Տի Պրոքշալն իրաւարդեղէտ Մէսարնիքը լրագրին մէջ հսկայաձև երգեհոնի մը նկարագրութիւնը կը գտնենք, 'ի Ֆէնսի-գոմի շինեալ Քէնդըքի մէջ :

Արդեօք ամենին ուշադրութիւն ըրած էք շոգեշարժ գործինքու սուլած ժամանակ հանած զանազան աստիճանի ձայներուն. — Ֆէնսիգոմի ճարտարարուեստ մը, որ միանգամայն մեքենագէտ է և սիրող երաժշտութեան, նոր օրինակ գաղափար մ'ունեցաւ երգեհոն մը շինելու, որուն եղեգանց մէջ ձայնն չէ թէ օդայ կամ փքոց միջոցով կը ծնանի, այլ ջրային շոգիէն : Յայտնի է թէ եղեգներն մեր երգեհոնաց վրային ներուն չեն նմանիր, այլ շոգայ կաթ սպից սուլելուն գրութեամբ. այս տարբերութեամբ միայն որ ձայնն եղեգան մէջ կը ձևանայ, որովհետև աստիճանաւորութիւնը նոյն իսկ եղեգան երկայնութենէն կամ լայնութենէն կը կանոնաւորի :

Սկզբան մեծ գծաւորութիւն ելաւ շոգեշարժ մը գտնելու համար, որպէս զի հաստատուն և կանոնաւոր ըլլայ անոր տրտադրութիւնն. սակայն դիւրաւ հընարքն գտնուեցաւ այնպիսի կերպով մը շինելով ապահովութեան գոնակն, որ միանգամայն երկու պաշտօնի ալ կը ծառայէ :

Առաջին փորձն կատարելապէս յաջողեցաւ. Մըսդը Այալդըրուա (այսպէս կոչի հրեշտիկն գործնոյն հեղինակն) ինքնին ուղեց զարնել զայն առաջին անգամ՝ անթիւ բազմութեան մ'առջև, որ խուռն ընթացիր էր անսովոր հանդիսիս : Երգեհոնն, որ դաշտի մը մէջտեղ գրուած էր, իւրացուց զմերձակայս. և որովհետև երեկոյ էր, 7 կամ 8 քիւր մեքը հեռաւորութեամբ լսուեցաւ առ հասարակ հիացմամբ :

Վերջապէս, կ'ըսէ Պրոքշալն Մէսարնիքը, ամերիկեան հանճարն՝ մէկ գործով միայն ամբողջ քաղաքի մը երաժշտութիւն լսել տալու գիւտն ուստի :